

# ՀԱԿՈՐ ՍԵՂՐԱԿԻ ԱՆԱՍՅԱՆ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (ծննդյան 115- ամյակի առթիվ)

## ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, մատենագետ, ձեռագրագետ Հակոբ Անասյանը ծնվել է 1904 թ. մայիսի 15-ին Թուրքիայի Էսքիշեհիր քաղաքում: Տարրական կրթությունը ստացել է Կուտինայի (Քյոթահիա) հայ կաթողիկե համայնքի դպրոցում, ապա Կուտինայի Թուրքական սուլթանական վարժարանում՝ յուրացնելով թուրքերենը: 1919-1922 թթ. նա ուսումը շարունակել է Վենետիկի Սբ. Ղազար կղզու Մխիթարյան վարժարանում՝ սովորելով հայերեն ու գրաբար<sup>1</sup>: 1922 թ. Անասյանը վերադաձել է Կ. Պոլիս, սակայն շուտով հասկացել է, որ այնտեղ ուսումը շարունակելու հնարավորություն չկա, ու 1923 թ. տեղափոխվել է Հունաստան, իսկ մեկ տարի անց՝ Ֆրանսիա, որտեղ հայրն էր ապրում: Կեցության հարցերը լուծելու նպատակով նա սկզբնական շրջանում զբաղվել է պատահական տարբեր աշխատանքներով, իսկ 1931-34 թթ. Փարիզում ունկնդրել է պրոֆեսոր Կարապետ Յ. Բասմաջյանի՝ Հայաստանի պատմությանը, հնագիտությանը և պատմական աշխարհագրությանը նվիրված դասընթացները<sup>2</sup>: Այդ տարիներին Հ. Անասյանը ամբարել է գիտական գործունեության համար անհրաժեշտ համակողմանի, խոր գիտելիքներ ու հմտություններ, որի լավագույն վկայությունները 1932-34 թթ. հայագիտության բնագավառում նրա կատարած ուսումնասիրություններն ու լույս ընծայած հոդվածներն են<sup>3</sup>:

Ավետիք Իսահակյանի և Արշակ Չոպանյանի միջնորդությամբ Անասյանը 1936 թ. ներգաղթել է Հայաստան: Նա 1936-41 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում՝ նախ որպես գրադարանի աշխատակից, ապա գիտական մատենագիտության բաժնի վարիչ և պատմության ֆակուլտետի Ն. Մառի անվան կաբինետի աշխատակից: 1941 թ. Անասյանը զորակոչվել է բանակ և մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1942

<sup>1</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 368: Հայ մատենագիտության տիրակալը (Յակոբ Անասեան), Լոս Անջելես, 2018, էջ 3-5:

<sup>2</sup> Յակոբ Սեդրակի Անասեան, Լոս Անջելես, 1984, էջ 10:

<sup>3</sup> Արեւմտահայերէնի «Ինքզինք» դերանուան մասին, «Երկունք» (ամս.), 1932, յունուար, էջ 6-8, ապրիլ, էջ 50-53, 1934, յունուար-փետրուար, էջ 99-102: Նպաստ մը հայոց ազատագրական պատմութեան. Մահտեսի Շահմուրատ եւ Յովհաննէս Թութունջի, «Երկունք» (ամս.), 1934, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 94-100:

թ. սկզբներին նա գերի է ընկել և տեղափոխվել Ռումինիա, որտեղ Անասյանը հնարավորություն է ունեցել ուսումնասիրելու ռումիներենը, իսկ հետագայում աշխատել Բուխարեստի Հայ մշակույթի տան ռումինահայ կենտրոնական Մատենադարանի և թանգարանի տնօրեն: Գերմանիայի պարտությունից հետո՝ 1945 թ. հուլիսին, նա վերադարձել է Երևան և անցել իր նախկին աշխատանքին<sup>1</sup>: Աշխատանքային գործունեության շատ կարճ ժամանակահատվածում ցուցաբերած բարեխիղճ ու պատասխանատու վերաբերմունքի և մասնագիտական բարձր պատրաստվածության շնորհիվ Անասյանը գրավել է Երևանի պետական համալսարանի գիտական գծով պրոռեկտոր, պատմաբան, ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի ուշադրությունը, որի հրավերով էլ 1947 թ. հոկտեմբերից աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում նախ որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող<sup>2</sup>:

Մինչև 1976 թ. ավարտը Անասյանի գիտական գործունեությունը շաղկապված է եղել պատմության ինստիտուտի հետ, թեև նա սերտորեն համագործակցել է նաև Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հետ, որի հնագույն ձեռագրերի հավաքածուն և հարուստ գրադարանը կարծես թե կախարդել, «գերել» են նրան, և այդ գիտական հաստատությունը դարձել է աշխատատենչ ու եռանդաշատ գիտնականի մշտական աշխատավայրը: Այդտեղ և այդ տարիներին է, որ լավագույնս բացահայտվել է Անասյան գիտնականի ձեռագրագիտական, աղբյուրագիտական, մատենագիտական, բնագրագիտական, բանասիրական ու պատմագիտական տաղանդը, խորությամբ դրսևորվել նրա բազմակողմանի հետաքրքրությունները, նպատակաուղղված ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, ընդգծված աշխատասիրությունը, համբերատարությունը: Այդ տարիների քրտնաջան ու ծանր գիտահետազոտական աշխատանքի շնորհիվ նա ստեղծել է հայագիտության տարբեր բնագավառների վերաբերյալ գիտական իր ողջ ժառանգությունը, որին կարող է նախանձել անգամ ցանկացած խոշոր գիտահետազոտական հաստատություն: Նման աշխատանքի արդյունքում էլ շնորհաշատ գիտնականը 1962 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան<sup>3</sup>:

Ընտանեկան հանգամանքների բերումով 1978 թ. Անասյանը հաստատվել է ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում: 1979 թ.-ից մինչև կյանքի ավարտը՝ 1988 թ. հունվարը, նա աշխատել է Կալիֆոռնիայի համալսարանի մերձա-

<sup>1</sup> Հայ մատենագիտության տիրակալը, էջ 15-27:

<sup>2</sup> Յակոբ Սեդրակի Անասեան, էջ 10-11: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, էջ 368:

<sup>3</sup> Յակոբ Սեդրակի Անասեան, էջ 14: Հայ մատենագիտության տիրակալը, էջ 27-52:

վորարևելյան լեզուների ուսումնական կենտրոնում: Միաժամանակ եղել է նույն համալսարանի Գրիգոր Նարեկացու անվան հայագիտական ամբիոնի պատվավոր անդամ: Լուս Անջելես տեղափոխվելուց հետո էլ Անասյանը շարունակել է գիտական գործունեությունը՝ հրատարակելով բազմաթիվ պատմական, մշակութային ու հասարակական բնույթի հետազոտություններ և հոդվածներ: Գնահատելով գիտնականի բազմաբեղուն գործունեությունն ու ստեղծած հսկայածավալ գիտահետազոտական ժառանգությունը՝ 1984 թ. նրան շնորհվել է Լա Վեռնի ամերիկահայկական միջազգային քոլեջի պատվավոր դոկտորի գիտական աստիճան<sup>1</sup>:

Հակոբ Անասյանը տիրապետել է շուրջ մեկ տասնյակ լեզուների (հայերեն, գրաբար, թուրքերեն, հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն, ռումիներեն, ռուսերեն, անգլերեն և այլն): Շնորհաշատ գիտնականն ունեցել է գիտական հետաքրքրությունների լայն և բազմաբևեռ շրջանակ: Նա տպագրվել է բազմաթիվ պարբերականներում, հեղինակել հարյուրից ավելի աշխատություններ, որոնք հիմնականում նվիրված են միջնադարյան Հայաստանի քաղաքական դրությանն ու իրադարձություններին, հասարակական-քաղաքական գործիչներին, կրոնի պատմությանը, մշակույթին, գրականությանը, լեզվին ու մատենագիտությանը, պատմագիրներին, ինչպես նաև հիշյալ ոլորտներին զուգորդվող և առնչվող հարևան ժողովուրդների պատմությանն ու մշակույթին<sup>2</sup>:

Նշանակալի է շնորհաշատ գիտնականի ավանդը հայոց ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրման բնագավառում: «XVII դ. ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» մենագրությունում<sup>3</sup> և մի շարք աղբյուրագիտական ու պատմագիտական աշխատություններում և հոդվածներում<sup>4</sup> Անասյանն իր պրպտումների ընթացքում հայտնաբերած

---

<sup>1</sup> Յակոբ Սեդրակի Անասեան, էջ 25: Հայ մատենագիտության տիրակալը, էջ 68-71:

<sup>2</sup> Յակոբ Սեդրակի Անասեան, էջ 28-33:

<sup>3</sup> Տե՛ս Անասյան Հ.Ս., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (պատմական հետազոտություն), Ե., 1961:

<sup>4</sup> Անասեան Յ., Դիտողութիւններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան վերաբերեալ, «Էջմիածին», 1956, № 8-9, էջ 93-99, № 11-12, էջ 68-76: Յ. Անասեան, Ստեփանոս Սալմաստեցի (հատուածներ նոր ուսումնասիրութիւնից), Երուսաղէմ, 1981, 24 էջ: Յ. Անասեան, Նպաստ մը հայոց ազատագրական պատմութեան. Մահտեսի Շահմուրատ եւ Յովհաննէս Թութունջի, «Երկունք», 1934, հոկտեմբերի 7, էջ 94-100: Յ. Անասեան, Թութունջական տիրապետութիւնը Հայաստանում ԺԷ դարում, «Տեղեկագիր (ՀՍՍՌ ԳԱ) հասարակական գիտությունների», Ե., 1951, № 5, էջ 51-70: Յ. Անասեան, Հայ-յունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (ԺԷ դ.), «Տեղեկագիր», Ե., 1954, № 3, էջ 85-99: Յ. Անասեան, ԺԷ դարի ազատագրական շարժումներն Արևմտեան Հայաստանում (պաշտպանական ելոյթ՝ դիսերտացիայի հրապարակային պաշտ-

վավերագրերի ու օտար աղբյուրների փաստերի միջոցով բացահայտել է հայ ժողովրդի, մասնավորապես նրա արևմտյան հատվածի ազատագրական շարժումների չուսումնասիրված կամ պակաս բացահայտված շատ քաղաքական իրադարձություններ: Թուրքական տիրապետության դեմ ուղղված արևմտահայ ազատագրական շարժումը հեղինակը ներկայացրել է երեք՝ 1633-66 թթ., 1666-69 թթ. և 1669-83 թթ. փուլով՝ այն դիտելով որպես «մի պատմական երևոյթ»՝ սերտորեն շաղկապված ժամանակի միջազգային «քաղաքական ու դիվանագիտական յարաբերությունների հետ»<sup>1</sup>: Հիշատակված մենագրությունը կառուցված է պատմական կոնկրետ նյութի և գիտական փաստերի հիման վրա, իսկ հեղինակի կարծիքներն ու եզրահանգումները բացառապես հիմնված են հայերեն և այլ լեզուներով տպագրված ու անտիպ ուսումնասիրությունների, պատմական երկերի, ժամանակագրությունների, ուղեգրությունների, հիշատակարանների, կենսագրական նյութերի, նամակների ու հուշերի, օրագրությունների և այլ սկզբնաղբյուրների տվյալների վրա<sup>2</sup>: Նորահայտ նյութերի հիման վրա Անասյանը վերհանել է արևմտահայ քաղաքական շրջանակների փոխհարաբերություններն ու շահախնդրությունները եվրոպական ու հարևան երկրների հետ, պարզաբանել եվրոպական պետությունների և Հռոմի դիվանագիտական-քարոզչական քաղաքականության՝ Օսմանյան կայսրությունը թիկունքից հայ-հունական զինված ապստամբությամբ թուլացնելու անհեռանկարային էությունն ու սնանկությունը: Նա հանգամանորեն լուսաբանել է արևմտահայ հասարակական հոսանքները, բացահայտել նրանց փոխհարաբերություններն ու դրանից բխող պայքարը, որով և նա պայմանավորել է արևմտահայ առևտրային բուրժուազիայի ազատագրական գաղափարն ու այդ շարժումը գլխավորելու միտումը<sup>3</sup>: Գիտնականը յուրովի է մեկնաբանել արևմտահայ բուրժուազիայի միջավայրում ձևավորված երկու հակադիր՝ չեյեբիական-էջմիածնական և խոջայական-սսական հասարակական թևերի ներդասակարգային պայքարն ու փոխհարաբերությունները: Նրա փաստարկներով՝ սսականության ներկայացուցիչները ոչ թե կաթոլիկական հավատքի քարոզիչներ էին կամ լատինադավան դառնալու կողմնակիցներ, այլ վերանորոգչական շարժման նախաձեռնողներ, որոնք ձգտում էին «բարենորոգում և հեղաշրջում

---

պանության առթիւ), Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 533-552: Յ. Անասեան, Մանր երկեր, Երկու ելոյթ՝ մի դոկտորականի քննարկման առթիւ, էջ 553-580: Յ. Անասեան, Թուրքական ֆոթովկաթը եւ հայերը (Օսմանեան կայսրութեան ձուլողական քաղաքականութեան պատմութիւնից), «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1979, էջ 21-90 և այլն:

<sup>1</sup> Անասեան Յ., Մանր երկեր, էջ 554:

<sup>2</sup> Անդ, էջ 535:

<sup>3</sup> Անդ, էջ 534:

մտցնել հայկական եկեղեցու դավանական հասկացությունների մեջ հռոմեական եկեղեցու հետ մերձեցման սկզբունքի հիման վրա, առանց սակայն խախտելու հայկական եկեղեցու օրգանական միասնությունը և նվիրապետական անկախությունը»<sup>1</sup>:

Անասյանը անդրադարձ է կատարել նաև նախորդ և այդ շրջանի ազատագրական գործընթացի կազմակերպիչների, մասնավորապես Ստեփանոս Սալմաստեցու կյանքին ու գործունեությանը: Նոր նյութերի ուսումնասիրությամբ նա բացահայտել է, որ Լվովի հայոց մայր տաճարում գտնվող քանդակն ու դրան կից տապանաքարի արձանագրությունում հիշատակվող «Ստեփանոս» անունը վերաբերում է ոչ թե հայոց կաթողիկոս Սալմաստեցուն, այլ Լվովի թեմակալ Ստեփանոս Ա արքեպիսկոպոսին: Վերջինս արձանագրությունում զուգահեռաբար ներկայացված է որպես Հռոմի Յուլիոս Բ պապի (1503-13 թթ.) ժամանակակից: Ըստ Անասյանի՝ նախ՝ Սալմաստեցին չէր կարող Յուլիոս Բ-ի ժամանակակիցը լինել, երկրորդ՝ նա մահացել է ոչ թե 1551 կամ 1552 թթ. Լվովում, այլ 1560-ական թվականներին, քանզի Լվովից վերադառնալուց հետո շարունակել է իր կաթողիկոսությունը, ինչպես վկայում են որոշ պատմական աղբյուրներ: Բացի դրանից՝ հիշյալ քանդակն ու արձանագրությունը չեն գտնվում որևէ գերեզմանի վրա, կանգնեցված-ամրացված են տաճարի պատի մեջ, չափսերով միմյանց հետ կապ չունեն և չեն կարող լինել մեկ հուշարձանի բաղադրիչներ: Ուստի Անասյանի կարծիքով՝ Լվովի քանդակն ու արձանագրությունը, Սալմաստեցուն պատկանելու պատմությունը լոկ թյուրիմացության արդյունք է<sup>2</sup>:

Անասյանը լուսաբանել է նաև թուրքական և պարսկական տիրապետությունների ներքո հայ ժողովրդի ծանր վիճակը, Թուրքիայի իշխանությունների հայատյաց, հայահալած և ճուլման, իսլամացման քաղաքականությունը: Փաստական նյութերի հիման վրա նա ապացուցել է թուրքական իշխանությունների կողմից այդ գործընթացի ծրագրավորված, հետևողական և համատարած լինելու հանգամանքը: Պատմական աղբյուրների վկայությամբ՝ թուրքերը այլադավաններին իսլամացնելու նպատակով կիրառում էին անթիվ-անհամար մեքենայություններ, որոնցից մինչ այդ պատմությանն անհայտ մեկի մասին է փաստում Անասյանը: Խոսքը 18-րդ դարի սկզբներում Կարնեցի Ուրախ Գրիգորի հիշատակության մասին է, որի համաձայն հայ արհեստավորներն իրենց գործը դնելու իրավունքը ստանալու համար

<sup>1</sup> Անասյան Հ. Ս., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 75-80:

<sup>2</sup> Անասեան Յ., Մանր երկեր, Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութան վերաբերեալ, էջ 450-468: Անասեան Յ., Մանր երկեր, Ստեփանոս Սալմաստեցի (հատուածներ նոր ուսումնասիրութիւնից), էջ 468-490:

բռնակցվում էին թուրքերի արհեստավորական միավորներին՝ համքարություններին, և անդամակցության համար ենթարկվում մահմեդական ծիսակատարություններին՝ փաստացի հավատափոխ լինելով<sup>1</sup>:

Գիտնականի ուսումնասիրության շրջանակում են եղել նաև հայկական հարցը, հայերի ցեղասպանությունը<sup>2</sup>, Բյուզանդիայի պատմության վերջին շրջանի վերաբերյալ հայկական աղբյուրների տեղեկությունների լրսաբանումն ու շատ այլ թեմաներ<sup>3</sup>: Հատկապես պետք է կարևորել Բյուզանդիայի անկման մասին գիտնականի աշխատությունը, որտեղ հեղինակն իր մեկնաբանություններով մեծապես լրացնում է ոչ միայն այդ իրադարձության պատմությունը, այլև պարզաբանում Մերձավոր Արևելքի և Միջին Եվրոպայի պատմության շատ իրադարձությունների վրա դրա քաղաքական-սոցիալական հետևանքները:

Անգնահատելի են Անասյանի ծառայությունները աղբյուրագիտության ասպարեզում: Մասնավորապես հիշատակման արժանի է տաղանդաշատ գիտնականի «Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ.» կոթողային աշխատությունը<sup>4</sup>: Այն ունի աղբյուրագիտական, բնագրագիտական, ձեռագրագիտական, պատմագիտական, բանասիրական արժեք և բովանդակային առումով հայ մատենագրության համապարփակ հանրագիտարան է: Պատահական չէ, որ շատ ուսումնասիրողներ հիշյալ աշխատանքը համեմատում են «Նոր Հայկազյան բառարան»-ի և Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի հետ<sup>5</sup>: Ուսումնասիրությունում Անասյանը հավաքել, մշակել և գիտականորեն դասակարգել է հայկական բնագրերը,

---

<sup>1</sup> Անասեան Յ. Ս., Թուրքական Ֆութովվաթը եւ հայերը (Թուրքիայի ձուլողական քաղաքականության պատմությունից), Մանր երկեր, էջ 582-620:

<sup>2</sup> А. С. Анасян, Армянский вопрос и геноцид армян в Турции (Краткая библиография литературы на русском языке, Лос Анджелес, 1983.- The Armenian Question and the Genocide of the Armenians in Turkey, Los Angeles, 1983, 177 էջ (ոուտերեն բնագիր և անգլերեն թարգմանություն):

<sup>3</sup> Անասեան Յ. Ս., Հայկական աղբիւրները Բիւզանդիայի անկման մասին, Ե., 1957, 150 էջ: А. Анасян, Отголоски битв при Хотине (1621 г.) в армянских источниках, сборник «Великая дружба», Е., 1954, с. 225-238: А. Анасян, Иоаннес Каменецкий и его «История Хотинской войны», «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 1958, № 2, էջ 258-286: А. Анасян, Армянские хронисты о падении Константинополя.- Византийский Временник, М., т. VII, 1953, стр. 444-466: Անասեան Յ. Ս., Գէորգ Ֆրանցէսի Քրոնիկոնի հայերեն անտիպ թարգմանությունը, «Բանբեր Մատենադարանի», Ե., № 3, 1956, էջ 121-129: Յովաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու, աշխատասիրութեամբ Յ. Ս. Անասեանի, Ե., 1964, 124 էջ:

<sup>4</sup> Անասեան Յ. Ս., Հայկական մատենագիտութիւն Ե-ԺԸ դդ., հ. Ա, Ե., 1959, 1227 էջ, հ. Բ, Ե., 1976, 1546 էջ, հ. Գ, Ե., 2004, 390 էջ:

<sup>5</sup> Յակոբ Սեդրակի Անասեան, էջ 38, 52:

բացահայտել վերջիններիս խմբագրությունների ժամանակային սահմանները, փոխառնչությունները, նշել հիմնական ու օժանդակ գրականությունը, ինչպես նաև աշխատությունների մասին առկա գրախոսականներն ու իր կարծիքը դրանց վերաբերյալ: Այլ խոսքով, նա հանրագումարի է բերել հայ մատենագրության շուրջ 1500-ամյա ձեռագիր ու տպագիր ժառանգությունը՝ հանգամանորեն ներկայացնելով և ըստ արժանվույն գնահատելով այդ հնագույն գանձերը: Անասյանի այս աշխատանքը կարելի է համարել ժամանակի հայագիտության մեծագույն նվաճումներից, որը նաև ուղեցույց է ոչ միայն հայոց դարավոր գրավոր ժառանգության, այլ նաև տարածաշրջանի ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Այն բարձր գնահատականի է արժանացել ժամանակի գիտական աշխարհի և մամուլի կողմից՝ որակվելով որպես երկարատև տարիների տիտանական աշխատանքի, գիտական բարեխղճության, մասնագիտական բարձր պատրաստվածության և բժախնդրության արգասիք: Միաժամանակ արժևորվել է նաև հեղինակի կողմից նյութերի մշակման ուրույն գիտական մեթոդը, պարզաբանումների բարձր գիտական մակարդակը, փաստերի ճշգրիտ շարադրման մոտեցումը, մասնագիտական հոտառությունը, լայն մտահորիզոնը, խոր և բազմակողմանի գիտելիքների իմացությունը<sup>1</sup>:

Աղբյուրագիտական, բնագրագիտական կարևոր նշանակություն ունեն երջանկահիշատակ գիտնականի ուսումնասիրությունները Վարդան Այգեկցու վերաբերյալ<sup>2</sup>: Անասյանը բացահայտել է Վարդան Այգեկցու մի քանի նոր գործեր, որոնք լույս են սփռել նրա «կեանքի ու գործունեության մութ մնացած կետերի եւ գլխավորապես նախայգեկեան» շրջանի վրա<sup>3</sup>: Հայտնի առակագիր Վարդան Այգեկցուն նա ներկայացրել է նոր, մինչ այդ անհայտ նկարագրով՝ իբրև միջնադարյան հայ նշանավոր հասարակական, մշակութային և եկեղեցական գործիչ, ազգային ինքնուրույնության պայքարի առաջամարտիկ, միջնադարյան մեծագույն աստվածաբաններից մեկը, լատինամոլ հոսանքի կարկառուն հակառակորդ և, վերջապես, «Արմատ հաւատոյ» երկի հեղինակ:

<sup>1</sup> Անդ, էջ 52-70:

<sup>2</sup> Անասեան Յ. Ս., Մանր երկեր, Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, էջ 179-220: Անասեան Յ. Ս., Մանր երկեր, Նորից Վարդան Այգեկցու յանդիմանական նամակի մասին, էջ 221-222: Անասեան Յ. Ս., Մանր երկեր, Հայ պատմա-դասանաբանական գրականության թանկարժէք յուշարձանը «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ», էջ 223-242: Անասեան Յ. Ս., Վարդան Այգեկցու յանդիմանական նամակը Դրոք գավառի բնակիչներին, «Նաւասարդ», Լոս Անջելես, 1983, մարտ, էջ 40-44: Անասեան Յ. Ս., Վարդան Այգեկցին որպէս համերաշխության գաղափարախոս, «Էջմիածին», 1969, № 7-8, էջ 52-58:

<sup>3</sup> Անասեան Յ. Ս., Մանր երկեր, Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, էջ 180-182:

Անասյանը ներկայացրել է Այգեկցու ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակը, երբ Կիլիկիայի հայ աշխարհիկ և հոգևոր խավի որոշ ներկայացուցիչների միջավայրում ձևավորվել էր «քաղկեդոնեան մտայնութեան միջավայր» և քննարկել Այգեկցու «Արմատ հաւատոյ» ժողովածուն, որով վերջինս հանդես էր եկել ի պաշտպանություն հայ քրիստոնեական ավանդույթների: Նրա կարծիքով՝ վերոհիշյալ աշխատանքը մի տեսակ «զինարան» է կրոնական օտարամոծությունների և քաղկեդոնական գաղափարախոսության դեմ<sup>1</sup>:

Անասյանը կազմել և հրատարակել է նաև մի շարք հեղինակների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու, Կոստանդին Երզնկացու, Արիստակես Լաստիվերցու, Սայաթ-Նովայի երկերի մատենագիտությունները<sup>2</sup>:

Մեծ է Անասյանի ավանդը նաև հայ եկեղեցու պատմության, հայ գրականության և մշակութային տարբեր իրադարձությունների ու գործիչների գործունեության ուսումնասիրման ասպարեզում: Դավանաբանական հետազոտությունների ընթացքում նա հանգել է այն եզրակացության, որ Աստվածաշնչի հայերեն հնագույն թարգմանությունը կատարվել է մինչև 431 թվականը՝ ասորական Պեշիտտայից: Նա առանձին ուսումնասիրման նյութ է դարձրել «Ներսես Շնորհալին եւ «Արմատ հաւատոյ» ժողովածուն», բացահայտել այդ ժողովածուի աղբյուրները ժամանակի հայտնի պատմագիրների (Իրենէոս Լուզոնացու, Բիտալիոս Անտիոքացու, Գրիգոր Աքանջելագործի, Յակոբ Արճեցու, Ջենոբ Եդեսացու, Դահեղա Եդեսացու, Կղեստինոս Հռոմայեցու և Բարսումա Անտիոքացու) ստեղծագործությունների միջոցով<sup>3</sup>:

Համառոտակի բնութագրելով Անասյանի գիտական գործունեությունը՝ վստահաբար կարելի է փաստել, որ նա թողել է հսկայածավալ և բազմաբևեռ

<sup>1</sup> Անասեան Յ., Մանր երկեր, Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, էջ 192-193:

<sup>2</sup> Անասեան Յ., Մանր երկեր, Բուզանդարանի ռուսերեն թարգմանությունը, էջ 355-373: Անասեան Յ., Մանր երկեր, Բուզանդարանի մի նախադասութեան մասին, էջ 375-378: Անասեան Յ., Մանր երկեր, Մովսէս Խորենացու ժամանակագրական համակարգի հարցը, էջ 379-392: Անասեան Յ., Մանր երկեր, Սայաթ-Նովայի տաղերը (մատենագիտական տեսութիւն), էջ 699-728: Անասեան Յ., Մանր երկեր, Սայաթ-Նովայի հայերեն տաղերի երաժշտական հրատարակությունները (մատենագիտական տեսութիւն), էջ 729-733: Անասեան Յ., Մանր երկեր, Սայաթ-Նովայի աղբրեջաներէն մի նորայայտ տաղը, էջ 735-737:

<sup>3</sup> Անասեան Յ., Մանր երկեր, Ներսէս Շնորհալին և «Արմատ հաւատոյ» ժողովածուն, էջ 243-252: Անասեան Յ., Մանր երկեր, «Արմատ հաւատոյ»-ի աղբիւրներից (Ա) Իրենէոս Լուզոնացի, էջ 253-260: Անասեան Յ., Մանր երկեր, «Արմատ հաւատոյ»-ի աղբիւրներից (Բ) Բիտալիոս Անտիոքացի եւ Գրիգոր Աքանջելագործ, էջ 261-267: Անասեան Յ., Մանր երկեր, «Արմատ հաւատոյ»-ի աղբիւրներից (Գ) Յակոբ Արճեցի, Ջենոբ Եդեսացի եւ Դահեղա Եդեսացի, էջ 269-274: Անասեան Յ., Մանր երկեր, «Արմատ հաւատոյ»-ի աղբիւրներից (Դ) Կղեստինոս Հռոմայեցի եւ Բարսումա Անտիոքացի «Պատճառք յաղագս հարցաքննութեան Կղեստինոսի Հռոմայ հայրապետի եւ Բարսումայի չարափառի Անտիոքու եպիսկոպոսի», էջ 275-300:



ստեղծագործական ժառանգություն: Հարկ է նշել, որ մենք գործ ունենք մի գիտնականի հետ, որն ունեցել է բազմաբնույթ հետաքրքրություններ, անսահման եռանդ, նախանձեղի անսպառ աշխատասիրություն, ուսումնասիրվող նյութը հիմնովին քննելու, դրա խորքերն ու ամենամութ, թաքնված շերտերը թափանցել-բացահայտելու, ժամանակի մտածելակերպին ոչ բնորոշ ինքնատիպ ու միաժամանակ պարզ մեկնաբանելու անգերազանցելի հմտություն ու կարողություն: Գիտնական, ում թողած ժառանգության ցանկացած հետազոտություն հեղինակի մասնագիտական բժախնդրության, բազմալեզու իմացության, քննարկվող-հետազոտվող հարցերն ու խնդիրները մանրակրկիտ, բազմակողմանի ուսումնասիրելու, դրանց խորապես տիրապետելու և անկողմնակալ ներկայացնելու մոտեցման, օտարալեզու աղբյուրներ օգտագործելու շնորհիվ ունեն նաև աղբյուրագիտական մեծ արժեք: Եվ այսօր ցանկացած հայ կարող է հպարտանալ Անասյանի գիտական ժառանգությամբ, իսկ նրա կերպարը կարող է փարոս ծառայել երիտասարդ սերնդի համար՝ գիտության օվկիանոսում կողմնորոշվելու և դրա տարերքները հաղթահարելու գործում:

***Բանալի բառեր՝ աղբյուր, վավերագիր, ուսումնասիրություն, հեփազո-  
րություն, ժառանգություն, իմացություն, բժախնդրություն, հմտություն,  
կարողություն, պատմություն, մշակույթ, գրականություն:***

### **Օգտագործված գրականություն**

1. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974:
2. Յակոբ Սեդրակի Անասեան, Լոս Անջելես, 1984:
3. Հայ մատենագիտության տիրակալը (Յակոբ Անասեան), Լոս Անջելես, 2018:
4. Անասյան Հ. Ս., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (պատմական հետազոտություն), Ե., 1961:
5. Անասեան Յ. Ս., Մանր երկեր, Լոս Անջելես, 1987:

### **HAKOB S. ANASYAN: TO THE 115-TH ANNIVERSARY**

**KHACHATRYAN ARMENAK**

*Candidate of Historical Sciences, Associate Professor*

The life of Hakob Anasyan and his contribution to Armenian studies are briefly presented. Particularly, his works in the fields of philology, source studies, historiography and bibliography were discussed, his individual and professional abilities and skills were appreciated.

**Key words:** source, document, study, research, heritage, knowledge, scrupulosity, skills, ability, history, culture, literature.

## АКОБ АНАСЯН: К 115-ЛЕТНЕМУ ЮБИЛЕЮ

**ХАЧАТРЯН АРМЕНАК**

*Кандидат исторических наук, доцент*

Кратко представлена жизнь Акоба Анасяна и его вклад в сфере арменоведения. В частности, были обсуждены ряд его исследований, проведенные в областях филологии, источниковедения, историографии, библиографии, оценены его личные и профессиональные способности и навыки.

**Ключевые слова:** источник, исследование, наследие, познание, педантичность, навыки, умения, история, культура, литература.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.03.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 17.04.2019թ.: